«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից նախատեսվող Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 3-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն

29.02.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2024 թվականի փետրվարի 23-ին, ժամը 15:00-ին տեղի ունեցավ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից նախատեսվող Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյանը, հանրային կապերի մենեջեր՝ Արփինե Հարությունյանը, «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ այլ աշխատակիցներ, «Ակունք-Ֆիրմա» ՍՊԸ տնօրեն՝ Հովհաննես Նիկողոսյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև հասարակական կազմակերպության անդամներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի փետրվարի 07-ի թիվ 022 (7023) համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի /kapan.am/ հայտարարություններ բաժնում: Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Ակունք-Ֆիրմա» ՍՊԸ տնօրեն՝ Հովհաննես Նիկողոսյանին:

Զեկույց (Հովհաննես Նիկողոսյան) – Նախ բարև Ձեզ, շնորհակալություն, որ բոլորդ եկել եք: Համառոտ կներկայացնեմ նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը, եթե կլինեն հարցեր, խնդրում եմ կհնչեցնեք ես կպատասխանեմ, ուղղակի հարցեր տալուց առաջ ներկայացեք խնդրում եմ: Խոսքը գնում է Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության վերաբերյալ: Նախ պոչամբարը աշխատել է 1962թ-ից, հետո ընդհատվել է 1984թ-ից, լեռնամետալուրգիա 2006թ-ից աշխատել է: Ընդհատումները կապված են եղել նրա հետ, որ այն ժամանակ Կապանն ու Քաջարանը միասին էին և ընդհանուր շահագործում էին Արծվանիկի պոչամբարը: Նախագծով նախատեսվում է 2 փուլով բարձրացնել պոչամբարի պատվարը՝ 10 10 մետրով՝ ամեն փուլում 4 անգամ 2.5 մետրով: Ինչի՞ է դա արվել: Դա արվել է նրա համար, քանի որ մենք ծավալները պատնեշները բարձրացնում ենք, որոշվել է կայունությունը պոչամբարի, պատնեշների կայունությունը: Արդյո՞ք կայունությունը թույլ կտա ավելացնել նրա վրա ևս 10 10 մետր և անցնել 851 նիշի: Փորձաքննությունը, նախագծում արվել է սեյսմիկան պոչամբարի, արվել է նաև նրա կայունության հաշվարկը: Եկել ենք այն եզրակացության, որ պատնեշները պետք է ամրաբեռնվեն, որպեսզի բարձրացվի նրանց կայունությունը: Սեյսմիկան հաշվել է 400 և 10 000 տարիների համար՝ միջինը ստացվել է 0.13 0.24 հորիզոնական տատանումներ: 80 % -ով տատանումների դեպքում 0.30 և մաքսիմալը հաշվել է, որ պոչամբարը պետք է դիմանա մինչև 0.4, 0.43 տատանումներով: Ինչ վերաբերում է կայունության հաշվարկին, ապա կայունության մեխանիկական հաշվարկը ցույց է տվել, որ ամրաբեռնման, հիմա էլ վիճակը կայուն է, բայց ամրաբեռնումը թույլ է տալիս 30-40 անգամ բարձրացնել պոչամբարի կայունությունը: Սա ինչ վերաբերում է պոչարին: Պոչամբարում նախագծային ծավալը, որ եղել է 11 մլն 7, կարծեմ 11 մլն 7, հիմա լցված է 7.35 և այնտեղ 4.325 ծավալ կա, որը պոչամբարի շահագործումը թույլ կտա իրականում ևս 6 տարի: Ինչ վերաբերում է պոչատարին, ապա պոչատարի վրա փոփոխություններ մենք չենք կարող: Պոչատարը կոմբինացված է ունի ինքնահոս 2,6 կմ է, որից 480մ-ը ինքնահոս է, մնացածը պոմպակայանի օգնությամբ է մղվում: Պոմպակայանում տեղադրված է վթարային ավազաններ 600 կուբամետր ծավալով: Դա արված է նրա համար, որ, երբ հետագա փականը փակվում է, եթե ճնշումը գնում է, հետագա փականը փակվում է և հոսքը, որպեսզի չթափվի շրջակա միջավայր թափվում է վթարային ավազան: Մյուսը, որ ես ուզում եմ ասեմ, այսօր պոչամբարը աշխատում է շրջանառու համակարգով՝ ընդհանուր առմամբ խյուսի հետ մոտ միլիոն 488 հեղուկ ֆազա է ուղղվում պոչամբար, որտեղ տեղի է ունենում 55.4 հազար գոլորշիացման կորուստ՝

գոլորշիացման հաշվին, 355 հազարը մնում է խոնավ պոչերի հետ պոչամբարում և 1 միլիոն 55 հազարը վերադառնում է շրջանառու համակարգ՝ ֆաբրիկայում աշխատելու համար: Սա ինչ վերաբերում է ջրին: Այսինքն, մենք արտահոսքեր, արտանետումներ պոչամբարից չունենք դեպի Գեղանուշ գետը: Մյուսն օդն է: Օդի վրա ազդեցությունը հիմնականում լինում է շինարարության արդյունքում, երբ աշխատում է գլդոն, բուլդոզեր, էքսկավատոր: Արտանետումները հաշվել ենք և փոշու համար, որը կազմում է 0.08-ից մինչև 0.3ՍԹԿ և կազմել ենք արտանետող գազերի համար, որը ավելի ցածր է և մեքենան նույնիսկ չի վերցրել 0.4 0 է հասնում մինչև: Ինչ վերաբերում է աղմուկին, ապա աշխատելու է բուլդոզեր, էքսկավատոր, եթե միասին աշխատեն մոտ 95 դեցի բալ է կազմում աղմուկը, սակայն հաշվի առնելով սանիտարապաշտպանական գոտու 300 մետրը և տեղի ռելիեֆը, ապա հաշվարկները ցույց են տալիս, որ սանիտարապաշտպանական գոտու կեսին նա կդառնա 38.3: Այսինքն, նորմայից 45 դեցիբելից ցածր է: Նախագծով նախատեսված է մշտական մոնիթորինգ անել, դա Գեղանուշի ջրերի մոնիթորիգն է, մոտակա բնակելի տարածքների օդի մոնիթորիգն է, կենսաբազմազանության մոնիթորինգն է: Ընդհանուր արժեքով տարեկան հաշվարկված է 8 միլիոն 100 հազար ծախս նախատեսել մոնիթորինգի համար: Պոչամբարի պատնեշների բարձրացմանը զուգահեռ իրականացվելու է ռեկուլտիվացիայի աշխատանքներ: Այսինքն՝ 2.5 մետր բարձրանալուց հետո պատնեշը արվելու է ռեկուլտիվացիա, որից հետո նորից 2.5 մ բարձրանալու է: Վերջնական ռեկուլտիվացիայի համար, որը ի նկատի ունենք պոչամբարի մակերեսը, ապա ըստ համայնքապետարանի պահանջով դատարկ ապարների փոխարեն կօգնագործենք մի մասը խոշոր շեբեն, մյուս մասը լցակույտերից դատարկ ապարները տեղափոխենք, դա լեռնատեխնիկական ռեկուլտիվացիան է, որից հետո վրեն պետք է ավելացնենք հողի բերրի շերտ և իրականացնենք ցանք: Մեր հաշվարկով մենք հաշվել ենք հողի բերրի շերտը 25 սմ, հաշվի առնելով, որ տեղից հանված հողի բերրի շերտը կբավականեցնի այդ մակերեսի համար 25 սմ: Խոսքը գնաց այն անգամ, որ պետք է 50 սմ նախատեսվեր, եթե մենք նախատեսենք համայնքի ցանկությամբ 50 սմ, ապա այդ հողը պետք է ձեռք բերվի և Հայաստանում հող չեն վաճառում: Հողը պետք է ձեռք բերվի և իհարկե ռեկուլտիվացիայի արժեքը կավելանա այդ հողի գնով: Եթե ուրշ հարցեր կան, խնդրեմ:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Ներողություն: Եկեք ըստ կարգի՝ ովքեր հարցեր կունենան, հերթով, հնարավորություն կտանք բոլորին արտահայտվելու: Պարոն Նիկողոսյան նախ ես հարց ունեմ, կապված ռեկուլտիվացիայի հետ: Նախորդ քննարկմանը մենք առաջարկել էինք,

որ հողի բերրի շերտը լինի 50 սմ, իսկ դուք ասեցիք, որ պահեստավորված հողը կբավականեցնի 25սմ բերրի հողով ռեկուլտիվացիա անելու համար և կարող եք 50 սմ անել, եթե հող կտրամադրեն: Ես խոստացել էի, որ հաջորդ հանրային լսմանը այդ հարցին հստակ կպատասխանեմ: Այժմ ասում եմ, որ համայնքը հողի տեղը կնշի, կտրամադրի հողը, այնպես որ նախատեսեք 50սմ:

Հարց (Հովհաննես Նիկողոսյան) – Խնդրում եմ գինը նշեք, որ մենք կարողանանք հաշվենք:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Ի՞նչ գին:

Հարց (Հովհաննես Նիկողոսյան) – Գին չի՞ լինելու:

Պատասխան (Գոռ Թադևոսյան) – Ոչ, բացի դրա հետ կապված աշխատանքները: Համայնքը կնշի վայրը, որտեղից կարող եք բերրի հողը վերցնել: Եվ խնդրում եմ նաև հաշվետվությունում հստակեցնել այս հարցը: Ոչ թե կարող է լինել, այլ կլինի 50 սմ, որից հողի 25 սմ կտրամադրի համայնքը: Շատ լավ: Ովքե՞ր հարցեր ունեն, լսում ենք:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Ուրեմն նախ ներկայանամ: Պարոն Նիկողոսյան ջան: Մենք անհիշելի ժամանակներից իրար ծանոթ ենք չէ՞: Անհիշելի ժամանակներից: Մի հատ ուշադիր հիշեք:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Հիշեցի:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Դուք իմ ասածների, իմ ելույթների նախկին մեր հանդիպումների 15 տարի առաջ կլինի, 5 տարի, 20 տարի առաջ կլինի որևէ ֆեյք արտահատություն, որևէ անճշտություն դուք նկատե՞լ եք:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – ոչ:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Ապրեք: Ժողովուրդ, ուրեմն ես Արթուր Գաբրիելի Մովսիսյանս լինելով 1957 թ-ից առ այսօր այս բոլոր անցուդարձի մասնակից, նաև լինելով լեռնային ինժեներ, երկար տարիներ աշխատած Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում իբրև արտադրության պետի տեղակալ, նաև պետ, լրիվ տիրապետում եմ այն տեղեկություններին, որը նույնիսկ մեր իշխանությունները չեն տիրապետում: Բայց ելնելով ազգային անվտանգության խնդիրներից ես իմ ելույթների մեջ ցանկանում եմ միշտ զուսպ լինել, քանի որ հասկանում եմ, որ մեզնից բացի ով ասես մեզ չեն լսում: Հասկացաք չէ՞: Ուրեմն պարոն Նիկողոսյան ջան, երբ դուք ասում եք, որ, հեռվից եմ գալիս, ավտոմեքենաները փոշի են բարձրացնում, էքսկավատորը աշխատում է, այդ փոշու մեջ կապարի պարունակությունը

որոշել եք ինչքա՞ն է կազմում: Փոշին բարձրանում գալիս է մինչև քաղաքապետարան է հասնում:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Պատասխանեմ:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Մեկ րոպե հարցը ավարտեմ հետո, խնդրում եմ: Եթե կապարը կա, ոսկին կա, ուրանը հաստատ կա: Մի քանի օր առաջ, մի քանի ժամանակ առաջ խեղճ Քաջարանի կոմբինատի էդ կնոջ մեջ ոսկրածուծում ուրան են հայտնաբերել: Ո՞վ է երաշխավորած, որ այս մեր քաղաքապետարանի հարգարժան ախպերների օրգանիզմում, երաշխավորված չէ ուրանը կա, կապարը կա:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Պատասխանեմ:

Լրացում (Արթուր Մովսիսյան) – Ոչ:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ելո՞ւյթ եք ունենում:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Ոչ, հարց եմ տալիս:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ուրեմն թողեք պատասխանեմ:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Այսինքն՝ առաջին հարցին պատասխանեք հետո երկրորդի՞ն:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Այո:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Ներողություն: Նախ խնդրում եմ հարցերը լինեն ըստ էության և երկրորդը գործնական աշխատանքային ոճից դուրս որևէ արտահայտություններ չլինեն: Սա ընկերական հավաք չէ, սա աշխատանքային, հանրային քննարկում է: Սա որպես զգուշացում:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Եթե սա աշխատանքային քննարկում է անցյալ քննարկման արդյուքները, արձանագրությունը ո՞ւր է, որ մենք ծանոթանանք: Մեր ելույթների, մեր ամբախ զամբախ դուրս տվածների, մեր առաջարկների: Չէ՞ որ մենք առաջարկեցինք մասնագիտական հանձնախումբ կազմեք, մասնագետներ, որոնք որ տասնյակ տարիներ աշխատել են և տիրապետում են այս ամենին: Ավելի շատ 15 անգամ, քան դուք եք տիրապետում: Ձեզ օգնություն: Ես առաջարկել եմ որպես մենք Ձեզ օգնություն ենք ուզում անենք: Մենք մեր երկրին ենք ուզում օգնել, մեր ժողովրդին ենք ուզում օգնել, կառավարությանն ենք ուզում օգնել, պետությանն ենք ուզում օգնել: Ո՞ւր է այդ արձանագրությունը: Իմ ելույթը ո՞ւր է: Անցյալ անգամ ես ելույթ եմ ունեցել, ո՞ւր է:

Պատասխան (Գոռ Թադևոսյան) – Պարոն Մովսիսյան, բոլոր կարծիքները արձանագրվել են և ածանագրությունը ստանալու համար դուք կարող եք դիմել Կապանի

համայնքապետարան, բացի այդ Կապանի համայնքապետարանի կայքում տեղադրված է արձանագրությունը: Դուք կարող եք հանգիստ ստանալ:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Դուք ժողովրդավարական երկրում եք ապրում, սուլթանա երկրում չեք ապրում: Դուք պարտավոր եք իբրև քաղաքացի ինձ նամակով ուղարկել, որ պարոն Մովսիսյան հարգարժան ջան մենք Ձեզ ուղարկում ենք Ձեր ելույթը, որի մեջ հայտնաբերվել է էս էս թերությունները: Դուք այս հարցերում ստում եք, մենք Ձեզ դատի ենք տալու, դիմելու ենք համաշխարհային դատարան: Հա իմիջայլոց Հռոմի ստատուսը ընդունվել է չէ՞: Մեռնեմ օրենքին: Ուրեմն թող Հռոմի քրեական դատարանը գա ստեղ: Էս ինչա Սյունիքը վաճառեն, կարիդոր մարիդոր, այս ամենը հայաթափության հետ է կապված:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Երբ ասես կգան:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Պարոն Մովսիսյան ես վերջին անգամ եմ զգուշացնում:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Զգուշացնում եք, որ ի՞նչ: Ոստիկանությանը հրավիրեք գան ինձ ձեռբակալե՞ն:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Ոստիկանության կարիք չկա:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Բա ինչի՞ կարիք կա, գողականի՞: Մի հատ գողականի հրավիրեք:

Խոսք (Գոռ Թադևոսյան) - Ձեզ հանգիստ պահեք: Արմեն կարգի հրավիրեք Ձեր գործընկերոջը:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Ո՞ւր է իմ ելույթը, ես ուզում եմ տեսնեմ իմ ելույթը արձանագրվա՞ծ է, ո՞ւր է:

Պատասխան (Գոռ Թադևոսյան) – Ձեր ելույթը կարող եք համայնքապետարանի կայքէջից վերցնել: Պարոն Նիկողոսյան խնդրում եմ պատասխանեք հարցին:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ես իմ զեկույցում ասացի, որ մենք ամրաբեռնման համար տեղափոխում ենք դատարկ ապարներ, նաև ռեկուլտիվացիա: Եթե դատարկ ապարներ է, ապա դա չի կարող լինել ոսկի, ցինկ:

Ավելացում (Արթուր Մովսիսյան) – Խնդրում եմ փոխանցեք պարոն Նիկողոսյանին, որ իր աչքով նայի դատարկ ապա՞ր է սա:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Այստեղից տեսնում եմ, կվարց է:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Երակների մեջ էլ ոչինչ չե՞ք տեսնում:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ոչ: Դուք ոսկին, պատկերացնում ե՞ք, ոսկու չափսերը, եթե լինի այդ դեղինը, պետք է կետերի տեսքով լինի:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Ի՞նչ դեղին, այստեղ դեղին չկա:

Հարց (Հովհաննես Նիկողոսյան) – Այդ դեպքում ինչպե՞ս եք ոսկին որոշել:

Պատասխան (Արթուր Մովսիսյան) – Վայ, Հռոմի պապը ո՞նցա որոշել, որ կաթոլիկություն կա:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Մենք կաթոլիկ չենք:

Ավելացում (Արթուր Մովսիսյան) – Չէ, ես ասում եմ մասնագետ եմ, երկար տարիներ աշխատած:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Պարոն Նիկողոսյան հստակ ասեք փոշու պարունակությունը:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Փոշու պարունակությունը օդում 0.053-ից մինչև 0.00035 ՍԹԿ է:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Կապարի պարունակությո՞ւնը փոշու մեջ: Ցինկի պարունակությո՞ւնը փոշու մեջ:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Սա խտանյութ չէ, սա դատարկ ապար է: Դատարկ ապարի մեջ չկա, մենք չունենք: Ես Ձեր հարցին պատասխանեցի:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Դուք չեք պատկերացնում ես ինչքան եմ Ձեզ հարգում, ախր մեր տարբերակում, իմ ու Ձեր տարբերակում սա նշանակում է в бой идут старики հանուն հայրենիքի:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ես Ձեզ ասեմ, ես չեմ ընդունում Ձեր ասածը: Դուք վերցրեք նմուշը, եկեք վերցնենք նմուշը, տանք անալիզի և այդ ժամանակ կխոսենք, կասենք այո դուք ճիշտ եք, դրա մեջ այսքան այսքան կապար կա:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Ես անալիզ վերցնե՞մ:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Մենք Ձեր հետ գնանք, որ դուք տեսնեք, որ մենք այդ անալիզը վերցնում ենք, ոնց ենք վերցնում կամ Ձեր ասած տեղից վերցնենք և տանք անալիզի: Եվ այդ ժամանակ կլինի предметы анализа կասենք հա եղբայր ջան ճիշտ ես:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Ողջամիտ առաջարկ է:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Էս հարցում մենք իրար հասկացանք: Միասին վերցնում ենք անալիզի ենք տալիս:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ, կարծում եմ լավ առաջարկ է, եթե ցանկություն ունեք ճշտելու կարող եք անալիզի ենթարկել: Այլ հարցե՞ր:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Այո երկրորդ հարցը: Պարոն Նիկողոսյան անցյալ անգամ ես թեթևակի կողքից եկա, որ ցանկացած պոչամբար, երբ նախագծվում է, սկսվում է շահագործվել, ուրեմն ուշադիր լսեք, առաջին հերթին կառուցվում է մայրական պատվարը: Դեռ պոչամբարը չկա, կոչվում է пионерная дамба: Հիմա դրա մարմինը որոշակի ասենք ապարներից, կամ ասենք նյութերից, կավահողերից է բաղկացած: Նա ասենք որոշակի ամրության, որոշակի ճնշումների ասենք նախագծային, որ պոչամբարը պետք է արդեն ավարտվի, դրա համար է նախատեսված: Հիմա, երբ որ այս մայրապատվարի վրա ուրեմն ավելացնում եք, պոչամբարը սկսում եք շահագործել նախագծից ավել թույլատրված սահմաններում, էս մայրապատվարի վրա, ոնց որ ժիգուլու վրա ասենք 500 կգ է նախատեսված չէ դնեք, դնում եք մեկ կամազի բեռ եք թափում: Էս վերևի դատարկ ապարները, ավելորդ զանգվածները բան շահագործում եք, սրանք մայրական պատվարի վրա ավելի ճնշում իրագործելով դեֆորմացնում են սա, դեֆորմացիայի են ենթարկվում: Էս դեֆորմացիան որևէ մի տեղ, ասենք, ինչ- որ սարքավորումների կարգով, որևէ մեկը սա արձանագրել է: Այսօրվա սեփականատերերի մասին չէ, առ այսօր, չկա: Չէ որ էս ճնշումը կա, էս ճեղքերը, որ առաջանում են բան, սեյսմիկ բան, բարձրություն: Վերջնական արդյունքում էս ամեն ինչը, որ դեֆորմացվում է սրա հետևանքով ինչ կարող է առաջանալ: Իմիջայլոց նորից եմ զգուշացնում պոչամբարները, քանի որ ես դրա մասնագետն եմ երկրորդ բարձրագույն կրթությամբ, կասեմ, որ ունեն մի հատկություն, որ դրանք կարող են միանգամից ժայթքում անել՝ պատվարում ժայթքում ու մի հատ ընդհանուր տարածել այդ ամբողջ զանգվածը, թափոնները որ կա տարածել: Ես ընդունում եմ, որ այսօր ճիշտ է որ պատվարը ամրապնդվում է, ինչի՞ համար, քանի որ հազար մի բան կա, ռակետի խբում բան դրանից էլա պաշտպանում, դա ընդունում եմ, բայց это изходят из принципа безопасности:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Հիմա պատասխանե՞մ: Առաջնային պատվարից սկսե՞մ:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Չէ, ես հարցը տալիս եմ, այդ դեֆորմացիան լինո՞ւմ է թե չէ, երբ որ ճնշումն ավելացնում ես:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Չէ:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Ո՞նց չէ: Բետոնից չի է էդ պատվարը:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Պարոն Մովսիսյան թույլ տվեք պատասխանեն: Պարոն Նիկողոսյան խնդրում եմ պատասխանեք: Պատվարի դեֆորմացիայի ռիսկերի վերաբերյալ խնդրում եմ հստակ պատասխանեք:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Նախ առաջնային պատվարը արվում է միայն նրա համար, որ սկզբնամասում պոչերից ստեղծվի ծավալ, որ պոչերը կարողանան լցնեն: Ինչ վերաբերվում է, որ չեմ իմանում ինքը ստատիկ, թե դինամիկի մասին է խոսում, ճնշում չի լինում: Նայեք պատվարը սենց ասեմ, սա առաջնային պատվարն է, սա եկավ գնաց ներս, տեսեք սրա վրա արդեն ճնշումը չկա: Պատվարը սենց են լցնում պոչամբարը, ոչ թե հետ պատվարի վրա 8 հարկանի շենք չի, որ հա շարեն ու բարձրանան: Առաջին պատվարը...

Մեջբերում (Արթուր Մովսիսյան) – Այնտեղ ձոր է, թեքություն է, ուղիղ տարածք չի:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Մեր բոլոր պոչամբարները կիրճային են:

Ավելացում (Արթուր Մովսիսյան) – Եթե դուք ուժային գիծը կազմեք էդ թեքությամբ:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Կազմեք տվեք այդ թեքությամբ: Ես Ձեզ ասում եմ այդպիսի բա չկա:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Ո՞նց եք ասում տենց բան չկա, մի ասա էլի, ես քեզ շատ եմ հարգում:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ես Ձեզ ցույց տվեցի, տեսա՞ր, որ առաջին պատվարի վրա չկար:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Այդ պրիբորները ո՞ւր է, որ ցույց եք տալիս որ չկա:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Այդ պրիբորները ես նոր Ձեզ բացատրեցի, որ մենք կայունությունը հաշվել ենք, տեսել ենք:

Ավելացում (Արթուր Մովսիսյան) – Այսօր քաղաքապետարանն ինձանից նեղանում է: Ախր ես իրենց ընտանիքների համար էլ եմ մտածում:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Ես էլ եմ Ձեզնից նեղանում: Այդ պատվարը, որ բարձրանում է, առաջին պատվարը, առաջնային պատվարը ունեն կավային էկրան:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Կավային էկրան չէ, կավային միջուկ: Էկրանն այնտեղ կավային չէ: Ես ամեն ինչ հիշում եմ:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Կա երկու տեսակի՝ կա անում են կավային միջուկ և կա, որ անում են ուղղակի կավային էկրան:

Ավելացում (Արթուր Մովսիսյան) – Կավային էկրան այնտեղ բացառում է:

Հարց (Հովհաննես Նիկողոսյան) – Դուք նախագծո՞ղ եք: Ես նախագծող չեմ:

Պատասխան (Արթուր Մովսիսյան) – Ես տեսել եմ: Կավային միջուկը կար, կավային էկրանը էնտեղ հիմարություն էր:

Հարց (Հովհաննես Նիկողոսյան) – Այսինքն՝ դուք 1962թ-ից այդ պոչամբարի отношении ունեի՞ք:

Պատասխան (Արթուր Մովսիսյան) – 1962թ-ից չէ, ես 1959թ-ից՝ իմ ծնողների մասնակցությամբ:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – 1959թ-ից պոչամբարը չկար: Ես բացատրեցի Ձեզ, չեք ուզում մի լսեք: Երկու տեսակի կա՝ միջուկային և էկրանային:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Խնդրում եմ պարոն համայնքապետարան, պարոնայք, ես, քանի որ ելնում եմ ոչ թե իմ անձնական ես տեսանկյունից, ես в предположении կարիք չունեմ: Ուրեմն լսեք ինչ եմ ասում: Եթե ինձ հրավիրել են Ռուսաստան, Աֆրիկա համաշխարհային համաժողովին, ինձ աշխարհով մեկ՝ Շվեցարիա, Անգլիա, Ֆրանսիա ինձ գիտեն համաշխարհային կառավարական ստրուկտուրաներում, в предположении կարիք չունեմ ես Ձեր հոգուն մեռնեմ, ես հանուն հայկականության, հանուն հայապահպանության, հանուն էս մարդկանց ընտանիքների, որովհետև կարող է իմ թոռս իրա երեխայի հետ ամուսնանա: Դուք հասկանում եք ստեղ Սյունիքում ուրիշ հոգեբանություն է:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Ներողություն, պարոն Մովսիսյան նորից եմ կրկնում, եթե հարցեր ունեք քննարկելու, որոնք կոնկրետ այս հաշվետվության, այսօրվա հանրային քննարկման վերաբերյալ չեն, ես կարող եմ Ձեզ հնարավորություն տալ նիստից հետո մի քանի րոպե մնալ և քննարկել, բայց հանրային լսման խնդիրների վերաբերյալ եկեք հարցերը տանք, լսենք և եթե այլ հարցեր կան ընդհանուր բնույթի, որոնք կոնկրետ ոլորտին են վերաբերվում, բայց կոնկրետ այս հանրային լսմանը չեն վերաբերվում, կարող եք նիստից հետո մի քանի րոպե քննարկել: Եվ խնդրում եմ ավելորդ ժամանակ չկորցնելու համար ըստ էության հնչեցվեն Ձեր հարցերը: Նախ Գեղանուշի պոչամբարի հետ կապված և հետո նորից եմ կրկնում, մենք Ձեզ հնարավորություն կտանք նիստից հետո դուք Ձեր կարծիքը կասեք ընդհանուր խնդիրների վերաբերյալ: Հիմա խնդրում եմ հարցը կարճ և հստակ ձևակերպեք:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Իբրև լեռնային ինժեներ մասնագետ, ինժեներ էկոլոգ երկրորդ բարձրագույն կրթությամբ մասնագետ և իրավաբանական կրթությամբ մասնագետ և նաև հասարակական քաղաքական գործիչ ես նորից եմ կրկնվում, ինչ վերաբերում է Գեղանուշի պոչամբարին առաջարկել եմ տղաներ Կավարտի տեղամասում 30 մլրդ դոլլարի հարստություններ կա թաքնված: Ինչո՞ւ չեք ուզում այդ պոչամբարը տեղափոխեք, լցափակեք, 2 տարի շահույթ մի ստացեք, աշխարհի լավագույն բիզնեսը երրորդ տարուց է սկսում շահույթը՝ էս տեսակի բաներում: Խնդրում եմ 2 տարի շահույթ մի ստացեք լցափակեք այդ

դատարկ տարածքները, որ Կավարտ գյուղը կարող է այսօր վերանա և այլն և այլն: Դատարկ տարածքները լցափակեք, կողքի հարստությունները հանեք, քաղաքապետարանն էլ միլիարդ ստանա, ազգն էլ միլիարդ ստանա, ժողովուրդն էլ, չգիտեմ, որ անվճար ուսում ստանա: Էկոլոգիան, որ ասում եք կապ չունի, ուրեմն լսեք, էկոլոգիայի հարց էլ չկա, որ մեկը մյուսի հետ կապ չունենա: Ազգային ինքնապահպանման քաղաքականության մեջ կապ չունի որևէ հարց, որևէ հարց կապ չունի, ուղղակի մասնագետները պետք է կապեն իրար: Ուրեմն երրորդ պատվարի վրա ռեկուլտիվացիան 50 սմ հողը ի՞նչ է: Տղաները ինձ հետ չեն խորհրդակցում, խնդրում եմ խորհրդակցեք: Էս խաղալիքները բոլորդ ունեք չէ՞: Խնդրում եմ հավաքեք георешетка, ի՞նչ է էդ георешетка-ն: Սրանք պլաստիկից բաներ են, որը լեգոյի նման հավաքվում է պատվարի վրա ու, որ բետոնը մղվումա 9-րդ հարկ բան չգիտեմ մեքենայի միջոցով, այդ սարքի միջոցով հողախառը, սերմնախառը հողը 10-15 սմ, зачем тебя ещё больше: Էդքան հող ինչի՞ համար է պետք:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Во первых геомембрана էնտեղ, во втарых մենք չենք ուզում փակենք, բետոն չենք ուզում անենք: Էդ հետո ռեկուլտիվացիա արվի խաղահրապարակ արվի:

Հարց (Արթուր Մովսիսյան) – Ես առաջարկում եմ համայնքապետարանին георешетка -ի տարբերակը քննարկել, քանի որ հողերը Կապանում բացարձակ լուրջ խնդիր կա բերրի հողերի հետ կապված, շատ լուրջ խնդիր կա, գիտեք ինչ եմ ասում էլի, և դա բավականին լուրջ ծախսատար է առաջարկում եմ георешетка – ի տարբերակը 15-20 սմ ավելի кто видел чтобы на рекультивация вышла 50 մ, кто?: Աշխարհում չկա տենց բան տղերք:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ լսեցինք Ձեր առաջարկը:

Հարց (Արթուր Մովսիսյան) – георешетка -ի տարբերակը խնդրում եմ գրեք: 50 սմ հող Կապանի համար, էս Արարատյան դաշտավայրը չի ցավդ տանեմ: Ուրեմն սա 1, 2-րդը՝ լցափակման հարց եք բարձրացրել: Թող չլինի, բայց բարձրացրեք, թող չստացվի, բայց այդ հայկական կապիտալը, որ կա այ Ձեր ցավը տանեմ: Ղարաբաղի հարց, Արցախի հարց այս ի՞նչ է կատարվում:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Պարոն Մովսիսյան վերջ, ավարտեք Ձեր ելույթը : Նստե՛ք Ձեր տեղը:

Պատասխան (Արթուր Մովսիսյան) – Չեմ նստում: Հաջողություն Ձեզ:

Պատասխան (Գոռ Թադևոսյան) – Հաջողություն:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Հարգելի գործընկերներ, ինչպես նախորդ հանրային լսման ժամանակ մենք բարձրաձայնել էինք թունելի վիճակի վերաբերյալ և առաջարկել էինք նախատեսել ուսումնասիրություն թունելի ներկա վիճակի և անվտանգության վերաբերյալ և վերացնել մասնագիտական ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած թերությունները: Հաշվետվության մեջ նշված է, որ ջրահեռացնող թունելի և արագահոսի նախագծերի *փոփոխություն չի նախատեսվում, սակայն անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց ներկա* վիճակը և տալ եզրակացություն անվտանգության վերաբերյալ: Ընդհանուր նկարագրված է թունելի վիճակը և վերջում այսպիսի մի պարբերություն կա «Անհրաժեշտ է, որպեսզի «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ն տվյալ նախագծի շրջանակներում պատվիրի մասնագիտացված կազմակերպությանը իրականացնել տվյալ աշխատանքները»: Ես խնդրում եմ Ձեզ ձևակերպումը հստակեցնեք պարոն Նիկողոսյան:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Պարոն Թադևոսյան ներողություն, բայց իրենք արդեն այդ հետազոտությունները արել են, հաշվետվությունն էլ դնենք տակը:

Պատասխան (Գոռ Թադևոսյան) – Ոչ, եկեք ձևակերպումը հստակեցրեք, երբ կլինի մեր պահանջված ուսումնասիրության արդյունքը, կներկայացնենք, բայց դա հաշվետվության մեջ, որպես պահանջ եկեք հստակեցրեք: Կարող եք մեջբերել նախորդ նիստի արձանագրությունից: Անհրաժեշտ է նախատեսել մասնագիտական ուսումնասիրություն թունելի ներկա վիճակի և անվտանգության վերաբերյալ, վերացնել մասնագիտական արդյունքում ի հայտ եկած բոլոր խնդիրները: Խնդրում եմ ուշադիր պարոն Նիկողոսյան բոլոր խնդիրները:

Այլ հարցեն կա՞ն: Ես ունեմ ևս մեկ հարց՝ ջրերի կուտակման հետ կապված: Հիշո՞ւմ եք անցյալ հաշվետվության մեջ կապ չունեցող հարց էր, բայց անցյալ հանրային լսմանը մտահոգություն հայտնեցին, որ պատվարի վրա կուտակվող ջրերի վերաբերյալ: Տարբեր կարծիքներ հնչեցին և խոստացաք, որ կուսումնասիրեք պատճառները և ավելի հստակ կպատասխանեք: Եթե գիտեք պատճառները, խնդրեմ, ասեք:

Պատասխան (Աիդա Ալեքսանյան) – Ուսումնասիրությունները դեռևս ընթացքի մեջ են: Ընթացիկ դինամիկա է մշակված ուսումնասիրությունը կատարվում է, օրինաչափությունը փորձում է դուրս բերվի, արդյունքների մասով դեռևս տեղեկություն չկա, բայց մենք ինքներս ենք հետաքրքրված, որ պատճառները հասկանանք ու անպայման, եթե պատճառների մեջ ներառված է գործընթացի հետ կապված պրոցեսներ, ապա նախագծի մեջ ներառենք:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Դեռ ուսումնասիրության փուլո՞ւմ է:

Պատասխան (Աիդա Ալեքսանյան) – Այո, ուսումնասիրության փուլում է:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Կա՞ն այլ հարցեր: Շնորհակալություն հարգելի գործընկերներ հանրային քննարկմանը մասնակցելու համար: Միայն վերջում այսպիսի հորդոր բոլոր այն քաղաքացիներին և կազմակերպություններին, ովքեր մասնակցում են հանրային լսումներին ես հորդորում եմ բոլոր նրանց ում կազմակերպության ներկայացուցիչները մասնակցում են հանրային լսումներին, ներկայանան հանրային լսումներին սթափ վիճակում, իրենց պահեն կոռեկտության շրջանակներում, այլապես նման մարդկանց հետ կվերաբերվենք նույն կերպ: Սա հորդոր բոլոր նրանց, ովքեր այսուհետ կգան և կմասնակցեն Կապանի համայնքապետարանի կողմից կազմակերպվող ցանկացած քննարկման: Մենք բաց ենք ցանկացած քննարկման համար, բայց թույլ չենք տա նման վերաբերմունք այստեղ: Շնորհակալություն:

Հանրային քննարկման պատասխանատու՝

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

Ձեռնարկող՝

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

գլխավոր տնօրեն **Սասուն Ավետիսյան**

Հանրային քննարկման վարող՝

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

Հանրային քննարկման արձանագրող՝

Կապանի համայնքապետարանի

գյուղ. և բնապահ. բաժնի առաջատար մասնագետ **Աստղիկ Մկրտչյան**